

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12... 30.
Վեցամսեայ 6

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ

Երկու թիւ մէկ ծառով
Տարեկան ... 14 Յ.


Վեցամսեայ ... 7

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօրս
Վեցամսեայ 1.50

ԿԱՆԻԿ

Մանուցման տողը
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԱԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du our val

„Иривуик“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иривуик“

ВАРНА

Գրութիւնք եւ չին
տրոշիր

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ մեր յարգոյ բամանդրներէն որ հաճին իրենց բամանդրները դրկել ընդ փոյթ :

Անցեալ տարուէն զարտք ունեցողներուն անունները պիտի հրատարակենք եւ թերթերուն առաջուրը պիտի դադրեցնենք :

ԱՆՈՒՅԶԱՅՆ

Սովորական կեանքի մէջ յաճախ պատահում է տեսնել, ժողովրդային տնտեսականներում, թէ ինչպէս աղաղակում են մանր առեւտրականները, իւրաքանչիւր իր սեփական խանութում, եւ գովում են իրենց ապրանքները, քչելու նպատակով, որպէս ամենալաւերը, միեւնոյն բանն ենք տեսնում հայ յեղափոխական կեանքի ներկայ ֆաղդում (փուլ) :

Փոքրիկ հայ ժողովուրդը իր սօնն է կատարում : Իւրաքանչիւր կուսակցութիւն առաջարկում է իւր ապրանքը իւր ամենալաւերը : Եւ անձնապէս չէզոք եմ, ոչ մի կուսակցութեան չեմ պատկանում, բայց միեւնոյն ժամանակ յօժարութեամբ կուզենայի որ եւ է կերպով օգտակար լինել մեր ճշնշուած ժողովրդին : Դիմելով, այս նըպատակով, յաճախ երբեմն մէկին, երբեմն միւսին ստանում եմ միշտ միեւնոյն պատասխանը. — Եղէք անգամ միւր կուսակցութեան, եւ այն ժամանակ ձեզ համար գործ կըստնուի : Գեղեցիկ, բայց այժմ ծագում է ուրիշ հարց. ուրիշ դիմել — իսկ աշխատել մ'չա ցանկանում եմ : Ահա՛ հարցը, որ մինչեւ հիմա տանջում էր ինձ :

Բաբերաղաբար, այժմ տեսնում եմ մի ելք այս փութը կացութիւնից : Եւ լսում եմ մինչեւ օրս մեր, հայերիս մէջ, չլսեալ ուրախալի ձայն. Եղբայրներս եւ Միւրթիւն :

Ինչպէս քաղցր է եւ ոգեւորիչ այս կախարչական խօսքը, որ ծառայում է որպէս բնաբան մեծ աշխարհիւնների, որոնք այնքան խոր ըմբռնեցին այս վսեմ խօսքերի սրտին ու էութիւնը : Նրանք, այսպէս ասած, ապրում են եւ չնչում են նրանցով եւ բոլոր նըրանց մէխանիզմը դրուած է այս հաստատուն հիմքի վերայ : Եւ ինչպէս ուրախ թրթռում է հայ մարդու սիրտը, երբ նա առաջին անգամ լսում է երկար ժամանակից ի վեր անհամբերութեամբ սպասեալ քաղցր խօսքը : Բայց անա նա հնչուեցաւ Մի անգամ, երկու անգամ, հետզհետէ աւելի յաճախ լսում եւ նրան աւելի աղղու : Նրա արձագանքը արդէն սկսում է տարա-

ծուիլ մինչեւ հեռուն. լսում եւ եւ զգում եւ, ինչպէս մի ալիք, նա տարածւում է՝ պատրաստ ոչնչացնելու իւր ճանապարհի վերայ բոլոր նոյն իսկ անյաղթելի խոչընդոտները : Տեսնում եւ թէ ինչպէս մեծածառները կենդանանում են, ստանում են կեանք եւ ձեւ : Այս զօրաւոր խօսքը, ինչպէս կըրակը մարգագետինների մէջ, բռնում է տարածութիւնները հետզհետէ աւելի ու աւելի : Ահա տեսնում ենք արեւի ծագման ժողովուրդ : Արեւելքը լուսւորուեցաւ. ահա արդէն փչեց զով քամին եւ արթնացնում է բոլոր քնած աշխարհը դէպի կեանք. ահա տատանում է դաշտը իւր հունձը, արտոյտը արդէն բարձրացաւ եւ պտույտ է անում եւ երգում է :

Ս', ինչ հրաշալի եւ գեղեցիկ կերպով տօնում է աշխարհը իւր զարթնելը...

Այս կոբի դաշտն է, ուր սեղի ունեցաւ տաք պատեկազմ, ուր արեւը թափուեցաւ հեղեղի պէս, ուր մահաբեր զենքերի շառաշը աւակաւն հնչում է օդի մէջ : Իայց այդ այն տաք կոբը չէ, ուր ամեն ինչ, թմրած վիճակում, կորցնում է իւր դատողութիւնը եւ պատահաբար հարուածում :

Պատեկազմիցներ սկսում են թուլանալ եւ յոգնել սպանող ցոյծի մէջ :

Միեւնոյն է մեր կուսակցութիւնների հետ : Նրանք աստիճանաբար յոգնում են կուսակցով միմեանց դէմ, աստիճանաբար կարծես թէ համոզւում են մեր ժողովրդի համար այդ կորստաբեր գործի անօգուտ շարունակութեան կամ, աւելի լաւ ասած, վրասնաբեր (սպաւոր) մէջ : Եւ նրանց վերայ, ինչպէս երեւում է, ընկնում է յոգնածութեան եւ ապա ամօթի զգացումը : Այն բանի մասին որ այնքան ժամանակից ի վեր մղում էին միմեանց դէմ ներքին կոբ, որից չէր կարող դալ ոչ մի շնչին օգուտ հայ ժողովրդի բազմաւորութեան համար : Նրանք կարծես մինչեւ իսկ պարզում են միմեանց ձեռքեր եւ ցանկանում են վերջ տալ այդ եղբայրասպան կոբին :

Ս', արդեօք չուտով կհասնի այն երջանիկ լուպէն, երբ մենք կհաստատենք որ մեզ մօտ գոյութիւն ունի մի միակ կուսակցութիւն, մի միակ մարմին եւ մի միակ ղեկավարող ոգի : Մի՞թէ այդ չպէտք է լինի, եթէ նա իրագործուի, մեր փառաւոր եւ արժանաւոր ժողովրդի հպարտութիւնը : Մի՞թէ ուրիշ ժողովուրդներ, որոնց թագաւորում է թշնամութիւնը, չպէտք է նախանձին Հայկի այս սիրունիցին :

Իմ կարծիքով, մեր կուսակցութիւնները պէտք է վերածուին մէկի միայն եւ միացած ոյժերով մղեն իրենց կոբը իրենց ընդհանուր թշնամու գէմ :

Եւ ինչպէս կարող ենք չմիանալ, երբ մեր թշնամիները այնքան զօրաւոր են : Այդ պահանջում է նոյն իսկ պատմական արամարանութիւնը : Միութեան այդ նշանաւոր փաստը պէտք է իրականանայ այնպէս տրամաբանորէն եւ ֆիզիկապէս, ինչպէս անհրաժեշտորէն մեծանում է եւ զարգանում ոտքի վերայ հաղի կանգնող եւ մշտապէս ընկնելու ենթակայ մահուկը եւ դառնում ապագայում ուժեղ եւ հսկայ այդ, զարգացած ֆիզիկապէս կատարեալ մկանային զօրութեան մէջ :

Միւս կողմից, նայեցէք ամեն կողմից սեղմուած մեր հայկական աշխարհագրական կարտի վերայ եւ դուք կհամոզուիք որ մենք իսկապէս կորցրել ենք մեր գլուխը եւ չենք իմանում ինչ ենք անում, երբ մենք ցանկանում ենք երկու խոչոր հսկաների միջեւ կամաց կամաց տեղաւորուել եւ մեզ համար սեփական տուն ունենալ : Եւ այդ պէտք է յիշել նաեւ ուրիշ բան, թուրքիային սահմանակից գտնուող եւ ուրիշ աւելի հեռաւոր երկիրներ, որոնք հետզհետէ ազատութեան տաճակաւն տիրապետութիւնից, խալիֆայութեան արաբից հեռու ծայրերում են ընկած : Նրանց, հետեւաբար, հնչում էր ազատութիւն, որովհետեւ ծածկիւնը, շնորհիւ իրենց ազատութեան, չէին կարող պահել իրենց գայտնի սակ այնքան ընդարձակ երկրներ, նրանք աւելի թուլ էին այն ժամանակ : Բայց դրանից, ազատութիւնը այդ ազատած ազգերին համեմատաբար այնքան էլ թանկ չը նստաւ : Այդ բոլոր կորուստներից յետոյ՝ տաճիկները յետ քաշուեցին կամաց կամաց եւ խմբուեցան, կիզրոնացան քանակով եւ որակով (այժմեան տաճիկ զինուորի եւ այն ժամանակի այ տաճիկ զինուորի մէջ տարբերութիւն էլ կայ) : Այս կատաղի զազանը աւելի էլ կատաղեցաւ, աւելի էլ սրեց իւր առանց այն էլ սուր ատամները : Նրա զօրութիւնը աճեց այն համեմատութեամբ, որով նրա հողային ոյժը պակասեց : Նա յօժարութեամբ չի վերադարձնի այն բարեբեր երկիրները, որոնք լեցնում են իրա դատարկ զանձը եւ որոնք նա սեփականացրեց սրով եւ կրակով, նա փնտռում է առաւելայ, որի վերայ թափէ իւր վրէժը :

Մեր պայմանները, հետեւաբար, համեմատաբար աւելի վատ է, մենք ունենք մինչեւ հիմա մեր դէմ մի բոլորների միայն, իսկ հիմա մի ուրիշն էլ ցոյց է տալիս մեզ իւր ատամները հիւսիսից, եւ մենք, ինչպէս մահուկներ, որոնք գտնւում են մեծ վտանգի մէջ, դեռ եւս վիճում ենք եւ կուտում մեր անձնական հայեացքների եւ ցանկութիւնների մասին եւ տալիս ենք այս կերպով մեր թշնամիներին յարմար պարագայ աւելի էլ ճնշելու թշուառ

Հայաստանի կոկորդը եւ, որպէս վաճառք, ծծելու նրա արեւը : Նոյն իսկ կենդանիները, նրանք իսկ, որոնք տարեր են միմեանցից սեռակով, խմբում են եւ միանում կատաղած բնութեան տարրերի դէմ, յամօթ մեր :

Ո՛հ, կարծես թէ փչում է այժմ ուրիշ կենդանաբար ղեկիւն, որ կենդանացնում է նոյն իսկ ամենալաւարժացած զգացումները : Ինչ բաղդաւորութիւն, ինչ ուրախութիւն, կարծես թէ բոլոր այդ անասնական բնազդները անհետանում են աստիճանաբար, այդ, կարծես այս տարի հրեշտակները երգեցին միայն մեզ համար :

Փառք ի քաճառն Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաւանութիւն :

Մենք, պատմականապէս, կարծէք կանգնած ենք մի մեծ իրողութեան առաջ, ուր ամեն ինչ հանդարտւում է եւ ծնրադրում նրա զօրութեան առաջ : Եւ անձնապէս կասկածում եմ այս բոլորի մասին թէ մի՞ գուցէ Միութեան մասին հետզհետէ աւելի ու աւելի տարածուող հարցերի շուրջը դարձեալ անձնական շահեր գտնուին, ինչպէս կասկածում եմ եւ այն բանի մասին որ մեզ, Հայերիս մօտ, զրակամապէս չկայ տողջ դատողութեան մի նշոյլ իսկ :

Եղբայրացիներով եւ պէտք է ասեմ որ թէ իսկապէս կուսակցութիւնների միջեւ կայ այդ բարեխիղճ եւ անկեղծ հոսանքը : Այն ժամանակ եւ ինձ թույլ եմ տալիս առաջ դնալ մէկ քայլ աւելի : Եւ առաջարկում կօնկրես, ուր կզբաղայցման համար բոլոր կուսակցութիւնները պէտք է ուղարկեն իրենց պատգամաւորները, եւ առաջարկում եմ գումարել նրան բոլորապէս մի քաղաքում, ուր հողը աւելի նպաստաւոր է եւ ուր հայ տարրը աւելի խիտ է : Նա պատգամաւորների համար գնալ եւրոպա — Զուրկներկ, Անգլիա եւ կամ ուրիշ տեղ — աւելի զօրաւոր է քան թէ քիչերին այստեղ, Բուլղարիայում :

Մ'ւր էր թէ վստանայինք բաղդ ունենայինք վկաներ լինելու այս ազնիւ եւ նշանաւոր Գործին — Միութեան, այսինքն եղբայրութեան եւ մեր կուսակցական ոյժերի ի մի համախմբման, որպէս մի կուսակցութիւն, ընդդէմ մեր ընդհանուր թշնամուն :

Ն.Ն.

ՊԱՏԵՐԱԶՄԸ



Ռուսական մեծ օրագիր «Նովոյե-
թի»-ի մէջ կը կարդանք սա ի-
մաստով յօդուած մը .

Ներկայ պատերազմը սոսկալի
է մանաւանդ անոր համար որ
չենք հասկնար թէ ի՞նչ պատ-
ճառաւ կամ ի՞նչ գաղափարով կը
պատերազմինք : Տակաւին Ռուս
ժողովուրդը այս եղանակաւ չէ
կռուած , և չը կրնար հասկնալ
թէ այս անսպասելի շարեքը կը-
նայ վաղը աղէտ մը դառնալ :
Անոր չհասկնալը շատ բնական
է , որովհետեւ ոչ վաճառական
աղբ մըն է , ոչ արհեստաւոր և
ոչ ուրիշ գողափար ունի տնտե-
սական մրցակիցներու փոխա-
դարձ յարաբերութեանց վրայ :

Ռուսներէն ո՞վ չը հասկնար
թէ Մայր . Արեւելքի մէջ երկա-
թուղիին շինութիւնը երկրին
բարբոթութեանը համար է . վա-
ճառականները և գործարանա-
տէրերը այդ լաւ կը հասկնան ,
բայց այս պարագան ժողովուրդի
հոծ մեծամասնութեան համար չէ :

Այլ սակայն այս պատերազմը
սերտիւ կապուած է երկրին տն-
տեսական յառաջդիմութեան
հետ , և հոս մեր շահերն են որ
կընդհարին դրացի երկիրներու
տնտեսական յառաջդիմութեան :

Քսաներորդ դարու սկիզբին
մեր դէպի Արեւելք յառաջացու-
մը մեզ ճակատ առ ճակատ բե-
րաւ ձաքօնի հետ , որ Եւրոպայի
նոր դուրսեան համեմատ կաղ-
մակերպուած երկիր մըն է : Խըշ-
նամիին դիտումները և պատե-
րազմին բնոյթը հասկնալու հա-
մար պէտք է յստակ գաղափար
կազմել Եւրոպայի և Ամերիկայի
քաղաքականութիւնը վարող աղ-
բակներու մասին :

Այս երկիրներու , մէջ դրա-
մագլխոյ զարգացման հետեա-
նօք , զինուորները և թնդանօթ-
ները կը պաշտպանեն ոչ թէ գա-
ղափարներ , այլ տնտեսական
շահեր . միմիայն դրամատէր-
ներու շահերը պէտք է հասկնալ :

Զինուորները կը պաշտպանեն
վաճառականը և սեղանաւորը ,
և աւերումի նոր արհեստները
վաճառականութեան շոգենաւնե-
րուն նոր ճամբաներ կը պատ-
րաստեն :

Իրօշակներու վրայ հին խոր-
հրդանշաններուն քով կը տես-
նենք դրամատէրներու գայթակ-
ղեցուցիչ նշանակները , խոշոր
տառերով .

— «Հարստանալ կուզեմ» և ի
մասնաւորի , ժողովուրդին հա-
մար . «Ուտել կուզեմ» :

Ահա այս կերպ դրօշակներով,
ոչ թէ հին խորհրդանշաններով,
ձաքօնացիք մեր վրայ կը յար-
ձակին :

Եւ ասոր համար այս պատե-

րազմին պէտք է Ռուս ժողովուր-
դը գրգռուի ոչ թէ միայն աղ-
բային արժանապատուութեան
ու վրէժխնդրութեան տեսակե-
տով այլ նաեւ Եւրոպայի արդի
կենսքին ու տնտեսական կազմա-
կերպութեան ծանօթացումով :

Մենք չէ որ կերթանք յար-
ձակում գործելու , այլ մենք
հանդարտ կը կենանք մեր տան
մէջ , բայց յստակօրէն կը ըմ-
բռնենք լալուր կարեւորութիւնը
այս դէպքին որ առաջին բաղ-
խումն է Ռուսիոյ քաղաքակիրթ
աշխարհի դրամատիքական—շա-
հագործութի կազմակերպութեան
դէմ , որուն միայն յառաջագոյն
է ձաքօնը :

Թերեւս առ այժմ միայն ձա-
քօնի հետ գործ ունենանք .
բայց այս ժամանակամիջոց մըն
է միայն որմէ պէտքէ օգուտ
քաղենք :

Ուշ կամ կանուխ պիտի սկսի
պատերազմ մը զրահապատ դրա-
մագլխոյ դէմ : Պէտք է պատրաստ
գտնուիլ ատոր :



Չարը մեծ ուշադրութեամբ
կը հետեւի Մայր . Արեւելքի զի-
նուորական գործողութիւններուն
կայսրը ուղղակի յարաբերութեան
մէջ է մասնաւոր հեռագրակե-
լով մը Մուքաչի զինուորական
իշխանութեանց հետ : Ամեն օր
երեք քառորդ ժամ Չարը փո-
խարքային հետ կը բանակցի :

Նիքոլա Բ . օրը միջին հաշով
տասը հազար բաւ պարունակող
հեռագիրներ կընդունի աշխար-
հի ամեն կողմերէն , որով ման-
րամասնութիւններ կը ստանայ
պատերազմի պատճառաւ յա-
ռաջ եկած ընդհանուր կացու-
թեան մասին :



Պատերազմին սկիզբը , ձաքօնի
տորմիլին յարձակման վրայ
ընկղմած երկու Ռուսական շոգե-
նաւերէն միոյն «Վարեակ»-ին
հրամանատարը Ստեփանովի զոր-
ումանք հայ կը կարծենու 360 նա-
ւաղներ խտակական շոգենաւի մը
մէջ ապաստան գտնելով աղա-
տած էին : Անհաւասար և բու-
ռն ճակատամարտէ մը յետոյ
ժանրապէս վնասուած շոգենաւը
թշնամիին չը յանձնելու համար
հրամանատար Ստեփանովի դի-
ցազնական ճիգերուն եւ վերջա-
պէս իր նաւը իր ձեռքովը պա-
թեցնելու քաջագործութեանը
ի վարձ Չարը «Ս . Գէորգ» մեծ
պատուանշանը շնորհած է :

ՔԱՂՈՒՍԾ



ՎԱՆԱՅ Ամերիկեան միախնար-
ներու որբանոցէն ընթացաւորտ
եղող աղաք իրենց գիւղերը վե-
րադառնալով , ոմանք քարոզչու-

թիւն և ոմանք ուսուցչութիւն
կընեն ու անհամաձայնութեան
առիթ կըլլան իրենց բողոքակա-
նամիտ գաղափարներով : Այս
աղաքը իրենց ամսականներուն
գլխաւոր մասը կը ստանան մի-
սիոնարներէն և տեղ տեղ ալ
գիւղացիներուն տուած հացահա-
տեկներով կը բաւականանան :
Աղթամարայ Կաթողիկոսականո-
ղապահ Տ . Արսէն վ . ագիւր է
համաձայնութեան մը գալ մի-
սիոնարներուն հետ և իր կողմէ
ներկայացուցիչ նշանակած երեք
անձերու միջոցաւ բանակցու-
թիւններ կատարելով , վերջա-
պէս համաձայնութեան գիրք մը
ստորագրուել է երկու կողմէն :
Այս գիրքը Ս . Պատրիարքին պիտի
զրկուի վաւերացնելու համար ,
և ապա գործադրութեան չլիտի
պիտի դրուի , և այս համաձայ-
նագրին համեմատ միսիոնարնե-
րու որբանոցին մէջ ասկէ վերջ
դատ պիտի տրուին նաեւ հայ .
եկեղեցական պատմութիւն , եկե-
ղեցւոյ դաւանանքը և երաժշտու-
թիւնը : Ընթացաւորտ աղաքը
տեղւոյն առաջնորդարանին մէջ
պիտի քննուին և ապա պաշտօնի
պիտի կոչուին , միայն ուսուց-
չութեան պարագայէլու համար :
Այս տեսակ ուսուցչներ իրենց
ամսականը պիտի ստանան զլ-
խաւորապէս միսիոնարութեանէն
և մաս մըն ալ Աղթամարէ ու գիւ-
ղերէ եկած վճարումներով : Շը-
ջուն տեսուչ մը և մագլուն ժողով
մը պիտի հսկեն այս ուսուցչնե-
րու վրայ : Ժողովին անդամնե-
րուն կէսը կաթողիկոսական տե-
ղապահին կողմէ պիտի նշանա-
կուի մէկը եկեղեցական ըլլալու
պայմանով , իսկ մնացեալ կէսը
միսիոնարութեան կողմէ պիտի
նշանակուի : Կըսուի թէ երբ այս
համաձայնութիւնը գործնակա-
նապէս իրականանայ , կարգ մը
անհաճոյ ընթացքներ վերջ պի-
տի գտնեն : Մենք այս մասին
բան մը ըսելէ առաջ պէտք ու-
նինք տեսնելու պատրաստուած
համաձայնութեան գիրքը : Եթէ
Աղթամարայ թեմերուն համար
ուսուցչներու պէտք կայ , ան-
շուշտ չիփնտուռի որ ասոնք
մասնագէտներ ըլլան այլ պարզ
ուսում ունեցող անձեր . ինչո՞ւ
համար այս ուսուցչները չպատ-
րաստուին տեղւոյն կեդրոնական
վարժարանին , հայկական որբա-
նոցին և մանուսնդ Աղթամարի
վանքին մէջ . եթէ տեղւոյն կեդ-
րոնական վարժարանը ու որբա-
նոցը չըլլակայ գիւղերու ուսու-
ցիչ ալ չի կրնար հասցնել , ին-
չո՞ւ համար ուրեմն ասոնց դրո-
ւատիքը կընենք թերթերու մէջ
պէտք կա՞յ ամերիկեան որբա-
նոցի ընթացաւորտները անպատ-
ճառ գործածելու , որպէսզի այս
կեղծով համաձայնութիւններ ան
հրաժեշտ ըլլան : Մենք տեղա-
կան պայմանները չատ մօտէն

չենք գիտեր , սակայն կը մտա-
ծենք թէ աւելի լաւ չէ՞ր ըլլար
որ Աղթամարի մէջ գտնուող
կարգ մը դատարկապարտ մար-
դեր իրենց թեմին պէտք եղած
ուսուցչները պատրաստելով ըզ-
բաղէին , քան թէ ուրիշ անօ-
գուտ գործերով :

ԲԱՂԷՇԻ Քաղ . Ժողովոյ ան-
դամներու ստորագրութեամբ գը-
րուած պաշտօնական նամակ մը
կը հերքէ այն լուրը թէ՞ Առաջ-
նորդարանի միջոցաւ պանդուխտ
և աղքատ աղաքայիններու շըր-
կած գումարներէն վարձք կառ-
նուի : Կաւեկցիք թէ ընտանե-
կան նամակներէն աղքատներունը
ձրիաբար կը զրկուէր , իսկ ու-
նեւորներէն թղթատարի սովո-
րական ծախքը կառնուէր մինչեւ
հիմա . բայց առաջնորդը այդ
գրութիւնը խափանելով , Առաջ-
նորդարանին միջոցաւ զրկուե-
լիք նամակները ձրիաբար կը զը-
կէ ելեր իրենց հասցեներուն
թղթատարի ծախքը հոգալով
առաջնորդարանի սնուկէն :
Պանդուխտներու կողմէն ալ ա-
ռաջնորդարանի միջոցաւ իրենց
ընտանեկաններու յանձնուելու հա-
մար զրկուած դրամներէն , աղ-
քատներունը նոյնութեամբ կը
յանձնուի , և ընկալագրի ու փո-
խագրէ ընտանեկան նամակի
թղթատարական ծախքն ալ առ-
աջնորդարանի սնուկէն կը
հոգացուի . իսկ ունեւորներէն
100 ին 2 դիւանական տուրք
կառնուի (ինչպէս կառնէ Պատ-
րիարքարանն ալ) , առանց այլ
ևս անոնց ընկալագրին ու ընտա-
նական նամակին թղթատարական
ծախքը պահանջելու :

Սոքրանդակ

ԱԶԳԱՅԻՆ

Պոլսոյ Ազգ . Հիւանդանոցին
ի նպատտ տարեկան նուագահա-
դէսը տեղի պիտի ունենայ Մարտ
7 ի կիրակի օրը Բերա : Կարգա-
դիր մասնախմբին կը նախագա-
հէ Տ . Մկրտիչ Լստան :

—Ազգ . Հիւանդանոցի երրորդ
թեւին շինութեանը համար՝
Յունաց վերաբերող բանջարոնո-
ցի սակարկութիւնը դեռ չէ վեր-
ջացած . որովհետեւ Յոյները՝
տեսնելով թէ այդ հողին անհրա-
ժեշտ պէտք ունի Հայոց Հիւան-
դանոցը՝ եռապատիկ դին կուզեն
մինչդեռ ժամանակաւ մեր Հի-
ւանդանոցի հողաբարձութիւնը
հաղարաւոր կանգուն տեղ ծա-
խած է Յունաց Հիւանդանոցին
աննշան գնով , նկատելով թէ
քոյր և բարեկամաբան հաստա-
տութիւն մըն է գնողը : Այս
փափկանկատողութիւնը և բարեա-
ցականութիւնը Հայերս միշտ
ունեցած ենք դէպի Յոյները ,

բայց ասոնք ընդհակառակը . . .
Մոկե՛ն Պատրիարքարան գրո-
ւած գիր մը տեղւոյն աղջկանց
որբանոցի կարօտ վիճակը ներ-
կայացուցած է . այնպէս որ ա-
ռօրեայ անունդը հոգալու համար
գրամ կը պահիս եղեր :

ՏՐԱՊԻՉՈՒՆ Աւանջնորդ Տ. Եղ-
նիկ Վարդապետի դէմ տեղւոյն
ժողովուրդը բողոքած և անոր
հեռացումը խնդրած է : Պատրի-
արքարանի Խառն ժողովը պա-
րագանքը նկատի առնելով պաշ-
տօնէ դադարած հռչակեց Տ. Եղ-
նիկ Վ. Ը և որոշեց Պատր. փո-
խանորդ մը զրկել Տրապիչօն :

ԵՐՈՒՍԱՆԻՍ զրկուելիք քննիչի
ընտրութիւնը դեռ չը կատարուե-
ցաւ : Առաջ նշանակուած երկու
քննիչները չպիտի կրնան Պոլ-
սէն մեկնիլ , որովհետեւ Սուլթա-
նին քէյքը այդպէս ուզեց , հա-
կառակ Օրմանեանի հազար ու
մէկ գիւմուսներուն :

—Տիկին Կատարինէ նատիրեանց
որ տարեկան 500 ռուպլի նպատ-
տով 30 որբ կը պահէ Սալնապա-
տու Ս . Գրիգորի վանքին աղջ-
կանց որբանոցին մէջ , նոր 168
ոսկիի նուէր մըն ալ ըրած է
Վանայ վարժարաններուն : Հո-
գարարձութիւնը 2—300 ոսկի ևս
խնդրեր է տիկինէն :

—Վերջին ժամուս Ռուսչուքէ
հասնող նամակէ մը կիմանանք
թէ Երկուշաբթի գիշեր (մարտ 1)
ժամը 8 կէսին Սօֆիայի ներքին
գործոց նախարարի հեռագրով
Պարոն Սուքիկեան բանտէն ա-
զատուած է :

ՎԱՌՆԱՅԻ Թող . Խորհրդոյ
ընտրութիւնը կատարուեցաւ կի-
րակի օր , և քուէից բացարձակ
առաւելութեամբ ընտրուեցան

Տ . Տ . Խաչիկ Ազնաւորեան , Նի-
կողոս Բէստամեան , Յովհաննէս
Գօյունեան , Սարգիս Հաճօլեան
Մինաս Առաքելեան և Յովհան-
նէս Ճամճեան , իսկ Տիար Մա-
տաթիա Սուքիասեան ստացաւ
108 քուէ . քուէարկուենք ընդ-
հանուր թիւն էր 223 :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Տրէյֆիւզի դատին վերա-
քննութիւնը երբ այսօր մէկ
կողմէ կը կատարուի Բարիզի
վճարեկ տոնանին առջեւ , միւս
կողմէ անոր նման նոր դատաճա-
նութեան խնդիր մը մէջտեղ և-
կաւ . Բարիզի թերթերը մեծ կա-
րեւորութիւն կուտան ասոր ալ :

Լրագիրներու հրատարակածին
նայելով Մարթէն անունով սպայ
մը Հնդկաչինի պաշտպանութեան
կարեւոր գաղտնիքները պարու-
նակով թղթեր ծախած է Բարիզի
ճարտական գեոպանին : Լրագրի
մը թղթակիցը տեսակցութիւն
մը ունեցած է ճարտական գեո-
պանատան զինուորական կցոր-
դին հետ . սա յայտնած է թէ
«Մարթէն» ոտորագրութեամբ
նամակ մը ստացած է որ ժամագ-
րութիւն ուղած է իրմէ . բայց
իր գրած պատասխանը ուրիշ
Մարթէնի մը ձեռքը անցնելով ,
չէ կրցած տեսակցիլ ժամուրդու-
թիւն ուղղին հետ : Կասկածուած
սպայ մը իր ընտանիքովը միա-
սին ձերբակալուած է : Դիտուած
թուղթերուն մեծ կարեւորու-
թիւն կը տրուի :

* * Տրէյֆիւզի դատը Բարիզի
վճարեկ տոնանը վերաքննել

տկսելով , ընդհանուր դատախազի
պահանջին վրայ շնչեց նախկին
վճար և նոր քննութեան
սկսաւ : Այս դատին վերաքննու-
թեան առիթ տուող երէք կէտեր
մէջտեղ ելած են . 1) Օտար տե-
րութեանց երկու զինուորական
կցորդներու միջեւ կատարուած
թղթակցութիւն մը կայ , որով
կը հասկցուի թէ Թ. սկզբնապես
Տ. ի փոխուած է և խորհրդակցուած
պաշտօնաթղթերը փաստ նկատ-
ուած էին Տրէյֆիւզի դատապար-
տելու : 2) Տրէյֆիւզի դատապար-
տելու ծառայող նամակի մը թուա-
կանը խորհրդակցուած էր : 3) Տրէյ-
ֆիւզին դէմ վկայող մէկը պա-
տեարկական նախարարէն կա-
շտուած է եղեր , 16 ոսկի թո-
շակով :

ՅԱՅ ՏԱՐԱՐ ՈՒ ԹԻԻՆ

«Վարիէդէ» դերս խումբը ընդ-
մասնակցութեամբ տեղւոյն նո-
րակողմ թատերասէր խմբին ,
անձնութեամբ պիտի ներկայաց-
նէ ին պատ աղգային երկուեռ
վարժարանի ՎԱՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԵ-
ՐՈՍՆԵՐԸ անուն թատերախաղը
5 արարուածով և խիստ ծիծա-
ղաշարժ զաւեշտ 3 արարուածով :

Յուսով ենք որ Սօֆիայի Հայ
հասարակութիւնը, ինչպէս ուրիշ
անդամներ, նոյնպէս այս անգամ
պիտի քաջալերէ սոյն աղգօգուս
ձեռնարկը :

Ի գիւտայ Թաղ . Խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ

Թագադր Փափագեալն Բ. Ասիերեան
ՍՈՅԻՍ, 21 փետրուար

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ա Ռ

Պ . ՄԱՐ ԶՊԵՏ ՈՒՆԻ

Շարաթ օրուան «Շարժում»ին Ձեր
մէկ գրութեան մէջ «պախալ» բառը
անանկ մը գրէր էիք որ իբր թէ պա-
խալութիւնը շատ վարնոց ևս անպա-
տիւ գործ մը եղած ըլլար : Բայց ես
որչափ որ ալ պախալ եմ ևս ձեզ
նման խմբագիր եւ դաստառու չեմ , սա
չափ կը թուի ձեր առած եմ որ արհա-
տու մը մարդ չը նախատուիր , ուր
մնաց որ պախալութեան պէս պատու-
աւոր արհեստով մը Մեղք որ Եւրո-
պա ալ կը թուի ձեր առած էիք եղեր ()
ու այսչափ պղտիկ բան մը իսկ չէք
գիտեր կոր . մի մոռնաք որ դեռ հիմա
վրանիդ հոտխտած նէ Գայսէրի յեռնի
հոտ կուգայ . կարելի է պապատ ալ
բաստումն չնկնելով պախալներուն կու-
տար . ար ծախէին : Ձգէ որ Եւրոպայի
մէջ ամենէն պատուաւոր եւ հարուստ
մարդիկ պախալութիւն կընեն . մեր
մէջ ալ, սանկ պղտիկ օրինակ մը տա-
լու համար , ըսեմ որ մեր արդի բա-
նաստեղծներէն մէկը Աղէքսանդր
Փանոսեան պախալութիւն կընէր . բա-
նաստեղծ Փանոսեանը, որ կը ներքե
սա խօսքիս, ձեռքը կից գրպանը խօթելու
ըլլայ Ձեզի պէս քանի մը տուգինա
զուրս կը հանէ :

Շիտակը սա պատասխանն ալ տալ
չէր արժեք , ցաւալի կէտ մը կայ նէ
անէ որ այս չափ չնչին բանի մը մա-
սին տգէտ եղող մէկու մը լրագրի և
մեր տղոց կը թուի ձեր յանձնը եմ :

ԵՒԱԳՐԻ ԿԻՄԻՏԵՃԵԱՆ

[պախալ]

1 Մարտ 904

Վառնա

ԱԶԴ

Պուլկարեւելի և Հայերէնի
հիմուն երկուստարդ վը պաշտօն
կը փնտռէ . և և վաճառատան
մը մէջ . Դիմել խմբագրութեանս :

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ (12)

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ

(Կազանդի նորավէպ)

—Երբէ՛ք աչքիդ առջեւ չե՛ս բերեր թէ օր մըն ալ քու
դիակը պիտի քաշկոտուի արիւննորու մէջ , որդերու
մէջ , ու գարշտութեանց մէջ . . . չե՛ս մտաբերեր
թէ այս պաշտօնը քու սպանդանոցը ու գերեզմանը
պիտի ըլլայ ուշ կամ կանուխ . . . Դողա՛ . . .
անմեղեկութեամբ արիւնը ձայն ունի եւ անոնց անէծքը
չանթէն աւելի անարկու է : Արիւնն ու անէծքը
քու կեանքիդ մահացու հատուածները պիտի դառ-
նան եւ դուն անոնց մէջ մահերու ամենէն՝ զար-
հուրելին պիտի տեսնես : Ի՛նչ է այս . . . դե՛ռ չը
կշտացա՛ր . . . դե՛ռ չը յագեցա՛ր . . . դե՛ռ չը յափ-
րացա՛ր . . . Ոճիւր հրէշային յղացումներէն մին է
ու մարդս խնթութեան կը տանի , Չե՛ս վախճար
խնթութեան :

— Խնթութիւն . . . ընդհատուց Սուլթան Համիտ .
— Այո՛ ,
— Ես Խնթի չեմ ,
— Անգեալն ու ներկան բան մը չեն . . . վախցի՛ր
պապագայի խնթութիւնէն որ անուստափելի պիտի
ըլլայ քեզի համար : Եւ եթէ կը փախալիս , ես

պատրաստ եմ քու խնթի օրերուդ ուրուանկարն ալ
պատկերացունել , որուն մէջ Բու վիճակը ու տա-
նապանքները պիտի տեսնես շատ յստակ ու սրտչակի
կերպով մը : Միայն թէ՛ անկից առաջ երկու կին-
դանի ուրուանկարներ ունիմ , զանոնք պիտի ցուց-
նեմ որ կարգը զայ խնթութեանդ . . .

Սուրաքկանը նոյն պահուն մոգական ճպտով
մը աննկնիլ մէջ շարժում մը ըրաւ ու ամեն բան
թանձր խաւարի մէ տակ ծածկեց . յետոյ ներկայա-
ցուց գեղեցիկ լեռնադաշտերով երկիր մը , որուն
կանաչութիւնն ակնախաղ տեսարան մը կը պարզէր :
Երկրին ձորերէն , հովիտներէն ու հեղեղամաններէն
զուլալ ու չղջողուն ջուր մը կը հոսէր ու գետեր ձե-
ւացնելով դէպի ծովը կը յառաջանար : Հարթ ու
նորաչէն ճամբաներ , կամուրջներ ու զիւրութեան
համար կառուցուած պահականոցներ կային ամեն
տեղ : Չորս կողմէն , ցանցի մը պէս շրջապատուած ,
չոգեկառքի ուղիներ կերեւային : Սիրուն պղտիկ
գիւղեր , աւաններ ու հոյակապ շէնքերով քաղաք-
ներ կը տեսնուէին իրարմէ ո՛չ շատ հեռու . . . Ու
մահաւանդ ծով մը կը տարածուէր այդ երկրին ըն-
դարձակութեան առջին , որ Եւրոպայի աւազանը
համարուած էր :

— Կը ճանչնա՞ս այդ երկիրը . . . հարցուց մու-
րացկանը :

— Չէ՛ . . . իրաւ որ չեմ տեսած զայն , պատաս-
խանեց Սուլթան Համիտ :

— Ատիկա իրիկուան ու այսօրուան Մակեդոնիան
է որ կը պատկերուի վաղուան երջանիկ տեսլակա-
րի մը մէջ : Կը նայի՞ս . . . մնացած է թրքական
հին , ծիծառ ու օյինպաղական յատկանշաններէն :

մինս Ահա՛ արժանաւոր ժողովուրդ մը , որուն Աստ-
ուած վիճակած է այս երջանկալից օրերը՝ հիմակ-
ուան արիւնի , կրակի , բռնութեան ու ոճիրներու
սեւ օրերէն ետքը . . . Աղէ՛կ մը նայէ որ գործիքս
պիտի դարձունեմ :

— Նայեցա՛յ . . . նայեցա՛յ . . . կակազեց Սուլ-
թան Համիտ : Դարձո՛ւր գործիք . . . դարձո՛ւր :

Սուրաքկանը դարձուց գործիքին անիւր .
Հրաշալի երկիր մը պատկերուեցաւ : Անոր լեռ-
նադաշտերը , հովիտները , անտառները , ձորերը ,
գետերն ու աղբիւրները դրախտի մը նուիրականու-
թիւն մը ունէին ու անոր շուքին մէջ կը փայլէին
կարծես : Անոր երկրիքը կապոյտ էր ու պայծառ .
անոր արեւը շողջողուն էր ու գեղածիծաղ . անոր
հորիզոնները բարձր էին ու կանաչաւէտ . իսկ անոր
օդը կենսատու էր ու անուշ : Անոր գիւղերը , անոր
աւանները , վերջապէս անոր քաղաքները հսկայ ,
վիթխարի , հոյակապ շէնքեր ունէին : Դարձեալ ու-
ղիներ ու շողեկառքերու ճամբաներ մաքուր ու
նորաչէն էին հոն :

— Հապա կը ճանչնա՞ս այս երկիրը . . . հարցուց
մուրացկանը :

— Ո՛չ . . . ո՛չ . . . ամանկ զեղեցիկ երկիր մը տե-
սած չունիմ . . . թոթովեց Կարմիր-Մարդը :

(ճարուհակելի)

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

— «Րէշթը»-ն թիէն չխնտէն ալտըզը մարեմաթ իւզըէ, Քիանկ-սի սան-ճաղընտա, պախուսուս Ծօշանկտա ճանէպիւէրէ գալըը խուսուռնէթ արթ-մըը ժըը : Լուրեկանտա գուսուրմուշէն Զալի պիր Ծրանսըզը թութուպ մասնսնէ գաթամըը վէ աճ Լօլտիւրմիշ, քէզա պիր Իթալիալը մասնսնտէն գա-չուպ Դալաթընը գուրթարապիւմիշ տիրի Ծըմէնտթէր մէմուրլարընտան ճի թի-շի գաթի օլընմըլար : Ձինլիւէրին դարէզընարըզը պու տէֆա թահրիգ օլընմաընըն սարլ սէպէպի պիր Իթա-լիալընը պիր Ձինլի գաթի Իթմիշ օլմասր թահմին օլընըլօր :

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԱՎՈՒՏԵԱՆ
ՎԷ ԷՎԼԱՏՆՈՐ ՏՕՊՐԻՉ

Ի՛նչ պահար մէլութի մի իշխուն մանի-
ֆաթուրա վէ կալանթարիա մաղաղա-
լարժըզա նէֆիս մալլէր, իրէքը վէ
կարգալ Ֆիստալլուլար վէ սալիր հէ-
ն չէ չէլալթի հէթիշմիշ օլտաղլէ, հէօր-
մէթ լի միւնթիլիւլէք հզհէր ճիհէթ աւ-
նուն իտէպիլիճհէկիմիզի իւան իտուպ,
լըթըզա իշխուն պիր տէֆա մաղաղալա-
լարժըզա միւրաճատթ իթմէլէրի բհճա
օլլուտուր :



Եթէ կողքէ հազարի կօչիկներ ու
րոնք իրենց վրայ ժպտուն են ձեռն
դիմացկունութեան կատարելութիւն
ն մասնաւոր գինի չափաւորութիւն,
ստանց վարանելու զինքնէ Ս. Ոս-
րոսանճանի, Մուսլա, Տօքթ.
Պասանօփի տանը զինաց:

Մ Ա Զ Ի Ն Ե Ր Կ
Վ Ե Ն Ի Ի Ս

Ոյս ներկը սքանչելի է իր տեսակին
մէջ . հրդեհ չը բիծաւորիր մօրթը եւ
գործածութիւնը խիստ դիւրին է :

Հինգ ֆր . ի փոխարէն կարելի է
ստանալ Տիար Ա . Զարպանէլեանէ :

Одговорникъ А. Курбетянъ
печатница "Взаимность" — Варна.

(1) Այս շատ հետաքրքրական կա-
լուածագիրը կը վերաբերի Կիպրոսի
Լ. Մակարի վանքին, ուրկէ օրինա-
կուելով զրկուած է «Բնասանքոյ» որ-
մէ կարտասանէր մէնք մեր ընկիցո-
ղաց ցոյց տալու համար նմոյշ մը թուրք
կրօնամոլոյ ինան :